

Կանոնավոր և անկանոն կոտորակներ/ մաս 3.

Համարիչ հայտարար

Այն կոտորակը, որի համարիչը փոքր է հայտարարից անվանում ենք կանոնավոր կոտորակ:

Օրինակ՝ $\frac{5}{8}$ կոտորակը կանոնավոր է, քանի որ $5 < 8$:

Այն կոտորակը, որի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան անվանում ենք անկանոն կոտորակ:

Օրինակներ՝

$\frac{7}{5}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 > 5$

$\frac{7}{7}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 = 7$:

Առաջադրանքներ՝

- Իրարից առանձնացրեք կանոնավոր և անկանոն կոտորակները.

$$\frac{69}{35}, \frac{77}{77}, \frac{86}{165}, \frac{7}{18}, \frac{17}{55}, \frac{9}{35}, \frac{47}{31}, \frac{7}{14}, \frac{101}{805}, \frac{9}{15}, \frac{6}{25}, \frac{405}{161}, \frac{651}{51}, \frac{66}{66}$$

- Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

- կանոնավոր կոտորակ

$$\frac{* 12}{312}, \frac{* 7}{24}, \frac{1 * 5}{114}, \frac{129}{1 * 5}$$

- Անկանոն կոտորակ

$$\frac{* 8}{38}, \frac{4 * 7}{427}, \frac{3 * 5}{385}, \frac{207}{2 * 7}$$

3. Համեմատեք.

$$\frac{27}{5} \text{ և } \frac{8}{9}$$

$$\frac{7}{6} \text{ և } \frac{5}{8}$$

$$\frac{10}{4} \text{ և } \frac{18}{21}$$

$$1 \text{ և } \frac{9}{4}$$

$$1 \text{ և } \frac{4}{9}$$

$$1 \text{ և } \frac{101}{101}$$

4. Արտահայտիր նշված միավորներով՝

$$\frac{3}{4} \text{ ց} = \text{ կգ}$$

$$\frac{3}{500} \text{ կմ} = \text{ մ}$$

$$\frac{4}{5} \text{ դմ} = \text{ սմ}$$

$$\frac{4}{25} \text{ կգ} = \text{ գ}$$

$$\frac{5}{3} \text{ ժ} = \text{ ր}$$

Խնդիր 5.

Ջրավազանում կար 3600 լիտր ջուր: Այգին ջրելու համար օգտագործվեց դրա $\frac{3}{4}$ մասը: Քանի՞ լիտր ջուր մնաց ջրավազանում:

Խնդիր 6.

Ուղղանկյան երկարությունը 40 սմ է, իսկ լայնությունը կազմում է նրա $\frac{2}{5}$ -րդ մասը: Գտիր ուղղանկյան պարագիծը:

Խնդիր 7.

Ամբողջ ճանապարհի $\frac{9}{13}$ -րդ մասը անցնելուց հետո n° ր մասը կմնա անցնելու: